ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2026-2027 ուսումնական տարվա ընդունելության ծրագիր

«Երաժշտական կրթություն» մասնագիտության ընդունելության «ՆԵՄԿ և երգ», «ԵՏՍ» առարկաների ընդհանուր պահանջները

Դիմորդները պետք է քննություն հանձնեն «ԵՏՍ», «ՆԵՄԿ և երգ» առարկաներից:

ԵՏՍ (Երաժշտության տեսություն և սոլֆեջիո) առարկայի քննության ընթացքում դիմորդները պետք է հանձնեն սոլֆեջիոյի գրավոր միաձայն թելադրություն (ութ տակտանի միատոնայնական պարբերություն, բնական կամ հարմոնիկ լադերում, 2/4, 3/4, 4/4 չափերում, ոչ բարդ ռիթմիկ կառուցվածքով և ինտոնացիոն քայլերով), որի համար տրվում է 20-25 րոպե:

ԵՏՍ-ի բանավոր քննության ընթացքում դիմորդները պետք է պատասխանեն հարցատոմսում ընդգրկված երաժշտա-տեսական հարցին, կարողանան բանավոր կառուցել և երգել ինտերվալներ, ակորդներ, մաժորի և մինորի տարատեսակներ:

Պետք է կարողանալ թերթից ընթերցել դիատոնիկ լադերում, 2/4, 3/4, 4/4 չափերում գրված միաձայն համարներ:

Պետք է կարողանան լսողությամբ տարբերակել տարբեր տեսակի ինտերվալներ և ակորդներ, մաժորի և մինորի տարատեսակներ:

ԵՏՍ

(ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈԼՖԵՋԻՈ)

Ձևաչափը	Հատկացվող միավորը
Գրավոր	
Թելադրություն	*0-5 միավոր*
Բանավոր	
Հարցատոմս	15 միավոր
1. Տեսական հարց	0-4 միավոր
2. Ինտերվալների, ակորդների կառավարում, տոնայնությունների իմացության ստուգում	0-4 միավոր
3. Թերթից ընթերցում	0-4 միավոր
4. Լսողական վարժություններ	0-3 միավոր

ՆԵՄԿ ԵՎ ԵՐԳ
(ՆՎԱԳԱՐԱՆՈՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԵՐԳ)

Չնաչափը		Հատկացվող միավորը
Տարբերակ 1	• 3 ստեղծագործության կատարում (նվագարան) • 1 ստեղծագործության կատարում (վոկալ)	Յուրաքանչյուր ստեղծագործության կատարման համար տրվում է 0-5 միավոր
Տարբերակ 2	• 2 ստեղծագործության կատարում (նվագարան) • 2 ստեղծագործության կատարում (վոկալ)	
Տարբերակ 3	• 1 ստեղծագործության կատարում (նվագարան) • 3 ստեղծագործության կատարում (վոկալ)	

Հաստատված է արվեստի և սպորտի ամբիոնի 13-րդ նիստում:

Արվեստի և սպորտի ամբիոնի վարիչ՝ Ա. Ա. Բարսեղյան